

Ի՞նչ է ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ

ՀԱՐՑՈՒՄԸ (CPS): Գաղտնի հարցում, որը տարեկան մեկ անգամ անցկացվում է՝ մեր սպառողներից մեր ծառայությունների վերաբերյալ կարծիքներ հավաքելու համար:

CPS-Ը ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՀԱՎԱՔՈՒՄ 7 ՈՂՈՐՏՆԵՐՈՒՄ

- Բավարարվածություն
- Հասանելիություն
- Որակ
- Արդյունքներ
- Բարելավված գործառույթ
- Մասնակցություն բուժումը ծրագրելուն
- Սոցիալական կապեր

ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ LACDMH-ԻՆ

- ✓ Բացահայտում է բարելավման կարիք ունեցող ոլորտները
- ✓ Ծառայությունները բարելավելու նպատակներ է դնում
- ✓ Տեղեկացնում է ծառայությունների մատուցման փոփոխությունների մասին
- ✓ Ամեն ինչ ավելի լավ է դարձնում մեր հաճախորդների համար



CPS 2024

- Մեծահասակները լրացրել են **4 941** հարցում, որը կազմում է **47,1%-ը**՝ LACDMH-ի կողմից հավաքված **10 493** հարցումների:
- Մեծահասակների **90%-ը** լրացրել են հարցումը անգլերեն, **8,5%-ը**՝ իսպաներեն, **0,7%-ը**՝ կորեերեն, **0,02%-ը**՝ չինարեն և **0,2%-ը**՝ վիետնամերեն:

ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ*

ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

- Ինձ դուր եկան իմ ստացած ծառայությունները- **94,1%**

ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

- Վայրը հարմարավետ էր- **86,4%**
- Սպասարկման ժամերը հարմար էին ինձ համար- **92,4%**



ՈՐԱԿ

- Անձնակազմը հավատում էր, որ ես կարող եմ աճել, փոխվել և վերականգնվել- **92,3%**
- Անձնակազմը զգայուն էր իմ մշակութային ծագման նկատմամբ- **87,4%**

ԱՐԳՑՈՒՆՔՆԵՐ

(ծառայությունների հետևանքով)

- Ես ավելի արդյունավետ եմ հաղթահարում առօրյա խնդիրները- **83,7%**
- Ես ավելի լավ եմ կարողանում հաղթահարել ճգնաժամը- **80,4%**
- Ես ավելի լավ եմ ինձ դրսևորում դպրոցում/աշխատանքում- **69,1%**



ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԸՆԿԱԼՈՒՄ

- Իմ ախտանիշներն ինձ այդքան էլ չեն անհանգստացնում- **68,7%**
- Ես ավելի լավ եմ կարողանում հաղթահարել խնդիրները, երբ դրանք սխալ են ընթանում- **75,9%**



ԲՈՒԺՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

- Ես, այլ ոչ թե անձնակազմը, որոշեցի իմ բուժման նպատակները- **84,0%**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ

- Ես իմ համայնքում ինձ տանն եմ զգում- **69,9%**



ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԼԵԶՈՒ

- Ես ծառայություններն ու փաստաթղթերը ստացել եմ իմ նախընտրած լեզվով- **96,3%**

ՀԵՌԱԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

- Հեռաբժշկական այցելությունները նույնքան օգտակար էին, որքան ամերես ծառայությունները- **35.1%**



ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Անկասկած, ես տեսել եմ տարբերություն իմ կյանքում անցած տարվա ընթացքում, ինչը շատ կարևոր է ինձ համար»:
- «Ես ստացա անհրաժեշտ օգնությունը և ինձ ապահով զգացի»:
- «Այստեղ ինձ հետ լավ են վերաբերվել»:

*Տոկոսները հիմնված են այն հաճախորդների/խնամակալների վրա, ովքեր Համաձայնել կամ Լիովին համաձայնել են յուրաքանչյուր առանձին հարցին: